İST. BELEDİYE
923
İST. KÜTÜPHANESİ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԳԱՏԸԳԻՒՂ — ՌԻՋՈՒՆ - ՉԱՅԻՐ

ՅԱՏԱԿԱԳԻԾ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ

ՅԱՏԱԿԱԳԻԾ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ

ԳԱՏԸ-ՔԷՕՅ ՈՒԶՈՒՆ-ՉԱՅԻՐ

ՎԱԻԵՐԱՅԵԱԼ, ԻԽԱՔՆ ԺՈՂՈՎՈՅ, ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի 21 ԱՊՐԻԼ 1893



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԳԱՏԸԳԻՒՂ — ՈՒԶՈՒՆ-ԶԱՅԻՐ

ՄԱՍ Ա.

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Յօդուած 1. — Գատը-գիւղի ազգային գերեզմանատունն՝ որ ի Ուզուն-Զայիր, ըստ իւր վաւերացեալ յաստակագծին՝ որ կցեալ է ի յետ կոյս սոյն կանոնագրոյն, բաժնուած է վեց կարգ թաղերու, որոց առաջին հինգ կարգերն մասնաւոր գերեզմանք են, (տե՛ս Յօդ. 8) եւ վեցերրորդ կարգերն ևս ընդհանուր գերեզմանք. (տե՛ս Յօդ 9). մասնաւոր գերեզմանաց մէջ թաղումն կը կատարուի դրամական փոխարինութեամբ, իսկ ընդհանուրին վերաբերեալ գերեզմանք ձրի են.

Յօդ. 2. — Գերեզմանատունն պիտի ունենայ մի մատուռ և քահանայի ու պահապանի համար սենեակներ, որք պիտի կառուցուին գերեզմանատան շրջապատին մէջ.

Յօդ. 3. — Ամեն հայ իրաւունք ունի յետ մահու թաղուելու Գատը-գիւղի ազգային գերեզմանատան մէջ՝ հատուցանելով սահմանեալ դրամական փոխարինութիւնը առ Խնամակալութիւնն։

Յօդ. 4. — Գերեզմանատան Խնամակալութիւնն կը կարգադրէ ննջեցելոյն համար հարկ եղած օրինական արձանագրութիւններն և կարտօնէ նորա թաղումը իւր թաղին մէջ. առանց Խնամակալութեան արտօնութեանը ներելի չէ գերեզմանատան մէջ թաղում կատարել։

Յօդ. 5. — Վերոյիշեալ հինգ կարգի մանաւորաց գերեզմաններէն զատ՝ կայ նաեւ տեղ մի որ սահմանեալ է եկեղեցականաց, այս թաղ կը գտնուի մատրան ճիշդ դէմը։ Եկեղեցականաց համար դրամական փոխարինութիւն չպահանջուիր, սակայն նոցա պարագայ և ազգականք մանաւորաց նման պարտին թաղ ունենալ Խնամակալութեան որոշման համեմատ։

Յօդ. 6. — Գատը-գիւղի ազգային գերեզմանատան մէջ առանց որ և է եկեղեցական արարողութեան թաղումն արգիլեալ է։ Եկեղեցական արարողութեան գրկելոց համար մանաւոր շրջափակ մի յատկացեալ է խորշ գերեզմանատան և անդանօր տապանաքար չդրուիր։

Յօդ. 7. — Մանաւոր գերեզմանք հետեւեալ եղանակաւ բաժնուած են։ Արտաքոյ կարգի կամ մանաւոր գերեզմանք, որոց սահմանեալ են մեծ դռնէն ներսի առաջին մասը, իսկ մեծ դռնէն սկսեալ ուղղոյն՝ որ կերթայ մինչ ցփոքր դուռն, երկու կողման վրայ կարգաւ

գտնուած գերեզմանատեղիներէն ուղղոյն երկու ե-
զերքի գերեզմանատեղիք՝ Առաջին կը կոչուին, ասոնցմէ
յետոյ եկողներն երկրորդ և անոնցմէ վերջին եկողը-
ներն երրորդ։ Գերեզմանաց այս բաշխման համեմատ
իւրաքանչիւր ննջեցելոյ համար ըստ հետեւեալ ցուցա-
կին գերեզմանափոր և արձանագրութիւն անուամբ
ծախք մը կը պահանջուի՝ զոր պարտին անխտիր վճա-
րել ննջեցելոց տեարք։

Արտաքոյ կարգի տեղւոյն համար 1 ½ Օսմ. ոսկի
Առաջին » » » 1 » »
Երկրորդ » » » » ¾
Երրորդ » » » » ½

Անտէր և աղքատ ննջեցեալք ձրիաբար կը թաղուին
ընդհանուր գերեզմանաց մէջ։ Այսպիսեաց համար ե-
կեղեցւոյ սնտուկն կը վճարէ 20 ղրշ. գերեզմանափորի
ծախքը։

Յօդ. 8. — Նոքա որ կը փափաքին յատուկ թաղ
ունենալ մանաւոր գերեզմանաց մէջ, պարտին ըստ
հետեւեալ ցուցակի դրամական փոխարինութիւն մի
հատուցանել, յատուկ թաղ ունեցողներուն սեպհա-
կանութեան գիր կը տրուի։

Արտաքոյ կարգի տեղւոյ մէն մի քառ. մէթրի համար. 5 Օ. Ո.
Առաջին » » » » 2 »
Երկրորդ » » » » ¾
Երրորդ » » » » 40 ղշ.

Յօդ. 9. — Ընդհանուր գերեզմանաց մէջ ննջեց-
եալք կը թաղուին ըստ կարգի մեռելոց. առանց յա-

տուկ թաղեր նոցա սահմանելու, սակայն ննջելոց տեարք կարող են իւրեանց ննջեցելոյն վրայ տապանաքար դնել, վճարելով գերեզմանատան սնտուկին ըստ կարեւորութեան տապանաքարին ½-3 Օսմ. ոսկւոյ գումար մի։

Յօդ. 10. — Գատը-գիւղի ազգային գերեզմանատան մէջ ոչ ոք իրաւունք ունի Խնամակալութեան որոշած սահմանէն դուրս ննջեցեալ թաղելոյ, և ոչ ալ առանց նորա հաւանութիւնն ստանալոյ որ և է շինութիւն կատարել անդ. կատարելի շինութիւնք պարտին լինել պատշաճ և ամեն պարագայի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց և սկզբանց համաձայն։

Յօդ. 11. — Մեռելոց փոխադրութեան յատկացեալ կառքերն երեք կարգի բաժնուած լինելով, իւրաքանչիւրին վարձքերն են հետեւեալք։

Առաջին կարգին	համար	5	Օսմ	ոսկի
Երկրորդ	»	» 2	»	»
Երրորդ	»	» 1	»	»

Այն անձինք որ անկարող են պահանջուած գումարը վճարել՝ այնպիսիք միայն կէս ոսկի ձիերու վարձքն վճարելով կարող են երրորդ կարգի կառքով փոխադրել տալ իւրեանց մեռեալը։



ՄԱՍ Բ.

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ



Յօդ. 12. — Գատը. գիւղի ազգային գերեզմանատան խնամակալութիւնն կը բաղկանայ հինգ անդամներէ, որոց չորսը աշխարհական և մէկը կղերական են։ Կըղերական անդամ է միշտ թաղին քարոզիչն որ կը նախագահէ ի հարկին խնամակալութեան ժողովներուն։

Յօդ. 13. — Խնամակալութիւնն իւր դիւանն ու իր գանձապետն ունի, զորս կ'ընտրէ իր մէջէն քուէարկութեամբ։

Յօդ. 14. Խնամակալութեան պաշտօնն հետեւեալք են.

Ա. Ըստ յատակագծին՝ որ վաւերացեալ է թաղին թաղական խորհրդէն, գերեզմանատան ներքին ուղիներն բանալ, Մասնաւոր և Ընդհանուր գերեզմանները որոշել, գերեզմանատան շուրջը պատով պատըսպարել, և ըստ պարագային կարգաւ Քահանայի եւ Պահապանի սենեակներ շինել, կառուցանել մատուռը, ծառերով զարդարել գերեզմանատունն։

Բ, Ննջեցելոց գերեզմաններն ցոյց տալ, և արձա-

նագրել թաղելոց անունն ու մականունը. մահուան թուականը ըստ իւրաքանչիւր գերեզմանի, ճշգրիտ և որոշ նշանակութեամբ։

Գ. Յատուկ թաղ խնդրողներուն տեղ որոշել և ըստ այնմ սեպհականութեան գիր տալ՝ վաւերացեալ ի Թաղական Խորհրդոյ Գատը-գիւղի և յԱզգային Պատրիարքարանէ :

Դ. Մէն մի ննջեցելոյ յատուկ թաղեր և տապանաքարի համար ըստ 7րդ. 8րդ. 9րդ. Յօդուածոց որոշեալ դրամական փոխարինութիւնն, ինչպէս նաև գերեզմանատան վերաբերեալ հանգանակութիւն, կառք, նուէր և այլ ամէն տեսակ հասոյթներն գանձել.

Ե. Հսկել կտակողաց և նուիրատուաց կամաց անթերի գործադրման և հարկ եղած ծախքերն ու շինութիւններն կատարել.

Յօդ. 15. — Խնամակալութիւնն իւր գործառնութեանց համար պատասխանատու է առ Թաղական Խորհուրդն Գատը-գիւղի, որոյ ամէն տարի իւր մատակարարութեան հաշիւն կուտայ.

Յօդ. 16. — Խնամակալութիւնն իւր գործառնութեանց սահմանին մէջ անկախ և ազատ լինելով՝ նորա իրաւասութեան կը վերաբերի կարգադրել այն մանրամասնութիւններն որ բացայայտ կերպիւ նշանակեալ չեն ներկայ կանոնագրոյս մէջ.

Յօդ. 17. — Իւրաքանչիւր խնամակալութեան պաշտօնն կաւարտի զինքն ի պաշտօն կոչող ամէն Թաղական Խորհրդոյ հետ.

Յօդ. 18. — Խնամակալութիւնն պարտաւոր է ուներալ ուղղակի իւր հրամանին տակ գրագիր մի, որոյ պաշտօնն է հաշուակալութիւնն և այլ Խնամակալութեան վերաբերեալ բովանդակ գրական աշխատութիւններն կատարել։

Յօդ. 19. — Գրագիրն պատասխանատու է առ Խնամակալութիւնն և ուղղակի նորա դիւանին հրամանին տակ կը գտնուի։

Ընթերցեալ եւ վաւերացեալ ի 15 նոյեմբ. 1892 գումարեալ Թաղային Ժողովոյ կողմանէ։

Ընկալեալ եւ հաստատեալ իսառն Ժողովոյ Ազգ. կեդրոնական Վարչութեան ի քառասներորդ առաջներորդ գումարման իւրում, ի 21 ապրիլի 1893 ամի եւ յանձնեալ ի գործադրութիւն։

10 Մայիս 1893

Պ. Կ. ԽՈՐԷՆ